ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԷԼԵԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՅԱՒԵԼՈՒԱԾՆ ԻԲՐԵԻ ՏԱԹԵԻԻ ՎԱՆՔԻ ՔՕԹՈՒԿ

Մուտք

Հայ մատենագրական ժառանգութեան՝ առաւելապէս տնտեսական բնոյթի գրառումներ բովանդակող ձեռագիր մատեանները կամ դրանցում տեղ գտած առանձին միաւորները հայագիտութեանը յայտնի են «Քօթուկ» (Քէօթուկ, թրք. ködük – գործ, հիմք, արարմունք) անունով։ Այս անուանաձեւն աւելի ուշ է մտել գիտական շրջանառութեան մէջ, իսկ աւելի վաղ դրանք կոչուել են «Կոնդակ», «Հոգւոց գիրք», «Յիշատակարան», «Յիշատակագիր», «Արձանագրութեանց գիրք» եւ այլ անուններով[1]։ Նմանօրինակ ձեռագրերի շարքում առաւել յայտնին Սանահինի վանքի Քօթուկն է (Մաշտոցեան Մատենադարանի ձեռագիր, որ է՝ ՄՄ 3031, հմմտ. ՄՄ 8150), որն ըստ տիտղոսաթերթի դարձերեսի 1797 թուակիր յիշատակագրութեան՝ պարսից աղայ Մուհամմադ խանի արշաւանքների ժամանակ թաքցուել է վանքի մերձակայ Աջառաց այրում, որտեղից ի յայտ է եկել ռուսահայոց առաջնորդ Յովսէփ Արք. Արղութեանի նախաձեռնած որոնումների արդիւնքում՝ սանահնեցի Առաքել Վրդ. Մուրադենցի կողմից. «Ընդ բազում գրեանց և զանգակաց գտեալ էր և այս Քէյթուկ գիրքս, որ ունի զօրինակս ամենայն հարկաւոր թղթոցն նոյնոյ վանիցն»[2]։

Ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանի բնորոշմամբ՝ Սանահինի Քօթուկը «վաւերական ու արժէքաւոր կալուածագրերի, նուիրաբերական արձանագրութիւնների եւ այլ փաստաթղթերի»[3] նշանաւոր ժողովածոյ է։ Այստեղ են ամփոփուել նաեւ վանքի շուրջ երեք տասնեակ վիմագրեր, որոնցից ժամանակին մեծապէս օգտուել է հնագէտ-վիմագրագէտ Կարո Ղաֆադարեանը[4]։ Նրա բնորոշմամբ՝ Սանահինի Քօթուկում «ամփոփուած են

---

[1] Երջանկայիշատակ ձեռագրագէտ Գէորգ Տէր-Վարդանեանը, որը եւ հրատարակութեան էր պատրաստում նրմանօրինակ բովանդակութեան ձեռագիր նիւթերն ամբողջացնող ժողովածոյ, Քօթուկի փոխարէն ընդունելի էր համարում *ընծայամատեան* բառը։

[2] ՄՄ 3031, 1բ։

[3] **Լ. Խաչիկեան**, Հայ միջնադարեան «Վանից պատմութեանց» գնահատման հարցի շուրջ, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ժ., Պէյրութ, 1982-1984, էջ 12 (վերատպուած՝ «Աշխատութիւններ», հ. Ա, Երեւան, 2012, էջ 137-146)։ Լ. Խաչիկեանն աւելի վաղ զբաղուել է միջնադարեան ձեռագրերում տնտեսական գործարքների վկայութեամբ գրառումների ուսումնասիրութեամբ (տե՛ս **Լ. Խաչիկեան**, Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերէն ձեռագրերի մէջ եւ նրանց աղբիւրագիտական նշանակութիւնը, «Բանբեր Մատենադարանի», հ. 5, Երեւան, 1960, էջ 21-42, վերատպուած՝ «Աշխատութիւններ», հ. Բ., Երեւան, 2017, էջ 422-448, հմմտ. նոյնի, Համառօտ ակնարկ սոցիալ-տնտեսական կեանքի պատմութեան – ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, հ. Բ., Երեւան, 1958, էջ LIII-CXXXVI)։

[4] Կ. Ղաֆադարեանի հաղորդմամբ՝ Սանահինի Քօթուկում ընդօրինակուած են իր հաւաքածոյի վիմագրերից 6-ը (իրականում 8-ը՝ Հմր 12, 28, 29, 30, 184-186, 188 – տե՛ս **Կ. Ղաֆադարեան**, Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Երեւան, 1957, էջ 65)։ Սանահինի վիմագրերը վերահրատարակելիս՝ Քօթուկում առկայ վիմագրերի թիւը հասցուել է 17-ի (տե՛ս Դիւան հայ վիմագրութեան (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին՝ **Ս. Բարխուդարեան**, **Կ. Ղաֆադարեան**, **Ս. Սաղումեան**, Երեւան, 2012, էջ 36, 37, 39, 43-46, 53-55, 58, 76, 118-120, Հմր 23, 24, 26, 39-42, 44, 45, 60, 62, 65, 127, 223, 225-227), այնինչ բնագրում 26-ն է (տե՛ս Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը), աշխատասիրութեամբ՝ **Պ. Մուրադեանի**, Ս. Էջմիածին, 2007, էջ 122-132, Հմր 46-68)։

վանքի հիմնադրման, նրա ունեցած եւ ձեռք բերած կալուածքների եւ պատմութեան վերաբերող կարեւոր համարուած բազմաթիւ տեղեկութիւններ՝ քաղուած հին հայ մատենագրութիւնից, վիմական արձանագրութիւններից, թագաւորական եւ իշխանական հրովարտակներից, կալուածագրերից եւ այլն»[5]։ Աւելի ուշ Սանահինի Քօթուկի բնագիրը հրատարակել է աղբիւրագետ Պարոյր Մուրադեանը՝ տալով այսօրինակ գրքերի բովանդակութեան ճշգրիտ սահմանումը. «Քէօթուկ» անունով յայտնի մատեանները բովանդակում են «եկեղեցու կամ վանական հաստատութեան պատմութիւնը, ունեցուածքը, նուիրատուութիւնները, նուիրատուները, առուծախը եւ այլ պարագաներ»[6]։ Այս գրքերն իրենց բովանդակած նիւթի առումով թէեւ տարբեր, բայց միասնական հենք ունեն, այն է՝ ամփոփում են միեւնոյն վանքին, հոգեւոր կենտրոնին առնչուող վաւերագրեր՝ ժամանակագրութիւններ, վիմագրեր, ձեռագրաց յիշատակարաններ, նուիրագրեր, արտօնագրեր, կալուածագրեր եւ այլն։ Առաւել փոքր ծաւալի ձեռագիր Քօթուկ-մատեաններ կամ բովանդակութեամբ աղերսուող ժողովածոներ յայտնի են Հաղբատավանքից, Սաղմոսավանքից, Վանայ լճի Լիմ եւ Կտուց անապատներից, Մշոյ Ս. Կարապետ վանքից, Նարեկավանքից, Կուտինայի Ս. Աստուածածին եկեղեցուց, Ակոռիի Ս. Յակոբավանքից, Վանի Ս. Վարդան եկեղեցուց, Կ. Պոլսի Գարթալ կղզու հայոց Ս. Նշան եկեղեցուց, Անկիւրիայի Կարմիր վանքից, Վենետիկի հայոց Երեւման Ս. Խաչ եկեղեցուց եւ այլ սրբավայրերից[7]։ Պայմանականօրէն Քօթուկ է կոչուել նաեւ Տաթեւի վանքի նախկին գրատան հաւաքածոյից Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութեան» վաղագոյն ձեռագրի (ՄՄ 6271) յաւելագրութիւնների մասը, որի ուսումնասիրութեանն էլ նուիրուած է մեր սոյն հրապարակումը։

Սիւնեաց պատմագրքի յաւելագրութիւնները

Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութեան» տպագիր առաջին՝ 1859 թ. փարիզեան երկհատոր հրատարակութեան վերջում կից է «Շարակարգութիւն եպիսկոպոսաց Սիւնեաց արարեալ ի միաբանից Տաթեւոյ վանաց» խորագրով յաւելուածն իբրեւ հերթական՝ Հե. (75-րդ) միաւոր[8]։ Գահացանկում անուանապէս եւ իրենց յիշելի գործերով վկայուած են Սիւնեաց քսան առաջնորդներ՝ Յովհան Վրդ. Որոտնեցուց մինչեւ մետրոպոլիտ Մարտիրոս Արք. Սիւնեցի (ժամանակագրական ընդմիջումներով՝ 1377-1830 թթ.)։ Նոյնը վերատպուել է նաեւ երկի թիֆլիսեան՝ 1910 թ. հրատարակութեան վերջում, որի առիթով հրատարակիչը ծանօթագրել է. «Բարեյիշատակ Կարապետ ծ. վարդապետ Շահնազարեանը իր հրատարակած Ստեփաննոս Օրբէլեանի Պատմութեան բնագրին կցել է յաւելուած Սիւնեաց եպիսկոպոսների յաջորդութեան մասին, որ եւ նոյնութեամբ տպեցինք այս հրատարակութեան մէջ»[9]։ Նկատենք, որ Ստեփանոս Օրբէլեանի պատմագրական բուն երկը՝ «Պատմութիւն նահանգին Սիսական» կամ «Պատմութիւն տանն Սիսական», աշխարհաբար՝ «Սիւնիքի պատմութիւն» խորագրերով, ունի ՀԴ. (74)

---

[5] **Կ. Ղաֆադարեան**, նշ. աշխ., էջ 65։

[6] Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը), էջ 9։

[7] Այդպիսիք տե՛ս **Վ. Թորգոմեան**, Ծանօթագրութիւնք Ստամպօլոյ պատմութեան Երեմիա Չելէպիի Քէօմիւրճեան, «Հանդէս ամսօրեայ», 1936, թ. 10-12, սիւն 488-492, «Կուտինահայ ժամանակագրութիւն», հրատարակեց՝ **Հ. Զօրթեան**, Վիեննա, 1960, **Հ. Փափազեան**, Ակոռու Ս. Յակոբայ վանքի Քէօթուկը, «Բանբեր Մատենադարանի», հ. 12, Երեւան, 1977, էջ 191-215 (վերահրատարակուած՝ «Յօդուածներ», հ. Բ., կազմող՝ **Ք. Կոստիկեան**, Երեւան, 2020, էջ 73-97), **Գ. Տէր-Վարդանեան**, Վենետիկի հայոց Ս. Խաչ եկեղեցու ընծայամատեանը, «Էջմիածին», 2013, ԺԱ., էջ 60-83։

[8] **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ **Կարապետ Վրդ. Շահնազարեանց**՝ միաբան Սրբոյ Էջմիածնի, Փարիզ, 1859, էջ 274-294։

[9] **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 524-544, 619։

գլուխ[10], սակայն երկի մի շարք ձեռագիր օրինակներում պահպանուած յաւելուածմիաւորներից մէկը, իբրեւ Սիւնեաց առաջնորդների մասնակի գաւազանագիրք եւ նիւթի տրամաբանական շարունակութիւն[11], Ս. էջմիածնի միաբան եւ Տաթեւի վանքի երբեմնի վանահայր Կարապետ Ծ. Վրդ. Շահնազարեանը (1850-1851 թթ.) հարկ է համարել յաւելել այն պատմագրքի վերջում։ Իրականում այդ միաւորը մասն է բուն երկին կից յետագայ տարբեր ժամանակներում արուած յաւելագրութիւնների, որոնց ամբողջութիւնը մասնագիտական գրականութեան մէջ առաւել յայտնի է Տաթեւի «Քօթուկ»[12] անունով։

Սիւնեաց պատմագրքի՝ Մաշտոցեան Մատենադարանի որոշ ձեռագրերում (ՄՄ 1488, 2868, 2869, 6271) խնդրոյ առարկայ «շարակարգութիւնը» վկայուած է «Իսկ կարգ, թիւ, անուանք եւ գործք Սրբոյ Աթոռոյս եպիսկոպոսացն այսոքիկ են, զորս ի հետեւեալսդ ցուցանիցէ»[13] վերտառութեամբ, որի ներքոյ շարակարգուած առաջնորդվանահայրերի անուանացանկը պատմագրքի հնագոյն՝ ՄՄ 6271 ձեռագրում տեղտեղ լրացուած եւ շարունակուած է մինչեւ 1901 թ.՝ Ներսէս Վրդ. Մէլիք-Թանգեանց (1901-1906 թթ.), առաջնորդների թիւը հասցնելով 42-ի[14]։ Այսինքն, պատմագրքին կից յաւելուածը, բովանդակային ու ծաւալային որոշ փոփոխութիւններով, տեղ է գտել երկի մի քանի ձեռագրերում։

Հետաքրքիրն այն է, որ Սիւնեաց առաջնորդ Յովակիմ Արք. Անգեղակոթցու[15] յանձնարարութեամբ 1781 թ. ընդօրինակուած ՄՄ 1488 «Պատմագիրք Սիւնեաց» ձեռագրի տիտղոսաթերթին յետագայի շղագրով աւելացուել է «Քեօթուկ մատեան» խորագի-

---

[10] Մոսկովեան՝ 1861 թ. հրատարակութիւնն ունի ՀԳ. (73) գլուխ, բանի որ Բ. եւ Գ. միաւորները միասնական են (տե՛ս **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց **Մկրտիչ Էմին**, Մոսկուայ, 1861, էջ 6-8, հմմտ.՝ ՄՄ 6520, 99ա-141բ, ՄՄ 6546, 1ա-222ա)։

[11] Համանման է, օրինակ, նոյն պատմագրի ՀԲ. (72-րդ) գլուխը, ուր յիշատակուած են Ս. Գրիգոր Լուսաւորչից ձեռնադրուած Սիւնեաց եպիսկոպոսները (53 անուն), Նորավանքում աթոռակալած 6 առաջնորդ, հայոց 22 կաթողիկոս, Ս. Գրիգորիսից մինչեւ հայոց թուականութեան ընդունման տարին գահակալած 72 առաջնորդ (տե՛ս **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 497-503)։

[12] Ս. էջմիածնի միաբան Յովհաննէս Եպս. Շահխաթունեանցն այն բնորոշում է Սիւնեաց արեպիսկոպոսարանի «Քեօթուկ անուանեալ մատեան» (**Յովհաննէս Եպս. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխ.՝ **Ա. Տէր-Ստեփանեանի**, Ս. էջմիածին, 2014, էջ 380), Հ. Ղեւոնդ Ալիշանը՝ «դիւանս Տաթեւոյ վանաց» (**Ղ. Ալիշան**, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 34), Մեսրոպ Արք. Սմբատեանցն ու Արտակ Եպս. Սմբատեանը՝ «Տաթեւու վանքի Քօթուկ» (**Մեսրոպ Արք. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 580, **Արտակ Եպս. Սմբատեան**, Տաթեւի համառօտ պատմութիւն, «Տաթեւ» տարեգիրք գրականութեան եւ արուեստի, Հալէպ-Սուրիա, 1930, էջ 349, 351)։

[13] ՄՄ 6271 ձեռագրում տուեալ խորագրին կից յետագայի գրառումը պարզում է, որ ցանկի հիմնական աղբիւրները «բաղեցան յարձանագրութեանց վանօրէից եւ ի պատմագրութեանց, եւ ի տապանագրոց» (ՄՄ 6271, 344ա)։

[14] ՄՄ 6271, 344ա-354բ։

[15] Ս. էջմիածնի միաբան Յովակիմ Արք. Անգեղակոթցին կամ Սիւնեցին աղայ Մուհամմադ խանի արշաւանքների ժամանակ Տաթեւի վանքից տեղափոխուել է Ս. էջմիածին, ուր ըստ «շարակարգութեան» աւանդած տեղեկութեան՝ վախճանուել է 19 տարի անց։ Ս. էջմիածնի միաբանական գերեզմանոցում պահպանուել է Սիւնեաց երբեմնի առաջնորդի օրօրոցաձեւ տապանաքարը, որի արձանագրութեան համաձայն՝ նա 20 տա-րի պաշտօնավարել է Տաթեւի վանքում, ապա եկել Ս. էջմիածին, դարձել ժամօրհնող ու ի Տէր ննջել 1811 թ. հոկտեմբերի 10-ին. «…լեալ սա առաջնորդ յերկեակ Ժ. (10) ամի (=20) մեծափառ վանից Սբ Ըստաթէի, ապա յայս Աթոռ ժամօրհնող լինի, է առնու վախճան ի սոյն այս թուի ՌՄԿ. (1811) եւ հոկտեմբերի Ժ.-ին (10)…» (**Ա. Յարութիւնեան**, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրութիւնները, Ս. էջմիածին, 2016, էջ 210, արձ. 422)։ Հաշուի առնելով Տաթեւում առաջնորդութեան 20, Ս. էջմիածնում սպասաւորելու 19 տարիներն ու մահուան թուականը՝ 1811, կարելի է արձանագրել, որ Յովակիմ Արքեպիսկոպոսը Տաթեւի վանքի առաջնորդ է եղել առնուազն 1772-1792 թթ., չնայած, որ իր նախորդի՝ Աբրահամ Վրդ. Աստապատցու մահուան թիւ է նշում Հայոց ՌՄԻԶ.՝ 1777 թուականը։

ը. «Քեօթուկ մատեան ցանկալի եւ վայելուչ գիրքս այս անուանեալ Պատմագիրք Սիւնեաց»[16], այսինքն՝ առնուազն ԺԸ-ԺԹ. դդ. սահմանագծին այս գիրքը, շնորհիւ իր յաւելագրութիւնների, Քօթուկի համբաւ է ունեցել։ Նոյն ձեռագրի «Պատճառ վերստին նորոգ գաղափարելոյ զսուրբ մատեանս ի տէր Յովակիմ Սիւնեաց դիտէ» խորագրի ներքոյ Սիւնեաց առաջնորդը մեկնաբանում է ոչ միայն պատմագրքի ընդօրինակման անհրաժեշտութիւնը (հին օրինակն արդէն հնացած էր), այլեւ Ստեփանոս Օրբէլեանից յետոյ գահակալած եպիսկոպոսների գաւազանագիրք ունենալն ըստ իրեն յայտնի տուեալների, որ երբեւէ չէր արուել. «իսկ մեր կամեցեալ որքան ի նորումս յայտնի գոն՝ որոց ոմանց գիտակք եմք ստոյգ, թէ ի լրոյ, եւ թէ ականատես գոլով, զմերումս կարի զանուանս եւ զգործս նոցին արձանացուցանել»[17]։ Այս տեղեկութիւնն ուղղակիօրէն պարզում է, որ ՄՄ 6271 ձեռագրի նոյնաբովանդակ, բայց յետագայում ցանկը համալրած անանուն գրիչն այն ընդօրինակել է ՄՄ 1488-ից առնուազն 1780-ականներին, որը տարբեր ժամանակներում լրացուել ու, ինչպէս վերը նշեցինք, հասել է մինչեւ 1901 թ.։ Յովակիմ Արքեպիսկոպոսը նոյն ձեռագրում նշում է, որ վանքապատկան գիւղերն ու հարկացուցակները յիշատակելուց զատ. «ժամ է այսուհետեւ դառնալ ի հոգեւորն կոյս եւ զհամայն ի թէմի եւ ի վիճակի մերում միջի կառուցեալ վանս եւ անապատս թուել, որք ներկայապէս շէն Աստուծով։ Նաեւ վերջապէս զՍուրբ Աթոռոյս եպիսկոպոսացն կարգս շարեալ»[18]։ Վերջին նախադասութիւնը վերահաստատում է Յովակիմ Արքեպիսկոպոսի՝ ոչ միայն Տաթեւի մլքատու հողերի, ձիթհան-սրանոցների, աթոռապատկան վանքանապատների ցանկերի, այլեւ «շարակարգութեան» կազմող-հեղինակ լինելը։

Մեր համոզմամբ՝ պատմագրքին կից նմանօրինակ բովանդակութեան յաւելագրութիւնների առկայութիւնը պատահական չէ. «Պատմութեան» ինչպէս խորագիրն[19] ու գլխացանկը, այնպէս էլ վերջին՝ ՀԴ. (74-րդ) գլխում ներկայացուած Սիւնեաց տասներկու (որ է՝ տասնչորս) գաւառների վանքապատկան գիւղերի հարկացուցակն ուղղակիօրէն վաւերացնում են համանման յաւելագրութիւններով ձեռագրի ազատ թերթերը լրացնելու, իսկ յետագայում նորերն աւելացնելու գրիչների ձգտումը։ Այս տեսանկիւնից թերեւս սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ պատմագիրքը որոշակիօրէն լրացուել ու ժամանակագրօրէն ընդլայնուել է։

Տաթեւի Քօթուկի բովանդակութիւնը

Ինչպէս վերը նշեցինք, մեզ հետաքրքրող տաթեւեան բնագիրը պայմանական է Քօթուկ կոչուել։ Դեռեւս ԺԹ. դարավերջին Հ. Ղեւոնդ Ալիշանը քաղուածոյ յիշատակումներ է արել Տաթեւի վանական Քօթուկ-դիւանից՝ վկայաբերելով վանքապատկան գիւղերի նոր՝ պտղի (բնատուրք) եւ հուլաւար (տասանորդ) կոչուող հարկացուցակները, հասոյթաբեր այլ ցանկեր (արտ, խոտատեղ, այգի եւ այլն), որոնք ընդօրինակուած

---

[16] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, կազմեցին՝ **Ա. Քէօշկէրեան**, **Կ. Սուքիասեան**, **Յ. Քէօսէեան**, Երեւան, 2008, սիւն 1407:

[17] ՄՄ 1488, 217ա:

[18] Նոյն տեղում, 220բ:

[19] «Հանդէսք բանից խաղցրավէպ պատմութեանց տանս Սիսական՝ հրաշահիւս յաւրիւնուածովք յարմարեալ զյիշատակ արանս հնոցն, նուաստ եւ ապիկար ոգւոյ Ստեփաննոսի՝ Սիւնեաց այցելուի եւ նախագահ մետրապպտի՝ որդւոյ մեծափառ իշխանաց իշխանին Տարսայիճին, որ եւ կոչի սա **յիշատակ այնմ ատեան**» (նկ. 1): Յետագայում որոշ գրեր սեւով փոխած-դարձրած «**յիշատակաց մատեան**» (ՄՄ 6271, 7բ, ընդգծումները մերն են – **Ա. Յ.**), քանի որ Պատմութեան ՀԳ. (73-րդ) «Յիշատակարան մատենիս նորին Ստեփաննոսի» գլխում Ստեփանոս Օրբէլեանն իր Պատմութիւնը կոչում է «յիշատակաց մատեան» (**Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 506):

է համարում 1720-ին (իրականում՝ 1730-ին), Տէր Աղէքսանդրի ձեռքով, ԺԷ. դարի բնագրից[20]։ Այնուհետ աղբիւրագէտ Աշոտ Գ. Աբրահամեանը, Ստեփանոս Օրբէլեանին վերագրուող ժամանակագրութեանը կից, իբրեւ յաւելուած, 1942-ին հրատարակել է ՄՄ 6271 ձեռագրի վերոնշեալ ցուցակները՝ ծանօթագրելով, որ Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութեան»՝ մատենադարանեան որոշ ձեռագրեր ունեն Տաթեւի վանքապատկան գիւղերի՝ այսպէս կոչուած նոր ցուցակը, որը «արժէքաւոր նիւթ է պարունակում Հայաստանի տնտեսական կեանքի պատմութեան համար»[21]։

Յետագայում Ակոռիի Ս. Յակոբավանքի Քօթուկը հրատարակելիս՝ պատմաբան Յակոբ Փափազեանը նշում է, որ ուսումնասիրողներից ոմանք Տաթեւի վանքի Քօթուկ են կոչել նաեւ Ստեփանոս Օրբէլեանի պատմագրքի վաղագոյն՝ ԺԴ. դարի ընդօրինակութիւն համարուող ՄՄ 6271 ձեռագիրը, որի վերջին էջերում պահպանուել են «Տաթեւի վանքապատկան գիւղերից ստացուող եկամուտների եւ այլ կալուածների ու տնտեսական հարցերի մասին կատարուած արժէքաւոր յիշատակագրութիւններ ու արձանագրութիւններ»[22]։ Այս փաստն աւելի ուշ արձանագրել է նաեւ Պարոյր Մուրադեանը[23], սակայն առանց յաւելեալ մեկնաբանման։

Սոյն հրապարակման համար մենք եւս հիմք ենք ընդունել պատմագրքի վաղագոյն՝ ՄՄ 6271 ձեռագիրը[24], որը Տաթեւի նախկին գրատնից Ս. Էջմիածնի մատենադարանի հաւաքածոյ է մուծուել 1930-ականներին՝ Տիրայր Եպս. Մելիք-Մուշկամբարեանի ձեռագրերի հետ միասին[25]։ Ինչպէս այս՝ մայր ձեռագրում, այնպէս էլ յետագայի ընդօրինակութիւններում խնդրոյ առարկայ յաւելագրութեան՝ Գեղարքունիքի մելիքներին ու տանուտէրերին նուիրուած հատուածը նախորդում է բուն «Պատմութեանը» (1513, 1519 թթ.)[26]։ ՄՄ 6271-ում առանձին նուիրագրեր ու զանազան յիշատակագրութիւններ կան ձեռագրի ազատ թերթերին ու լուսանցքներում, իսկ առաւել ընդարձակ ու հիմնական մասը «Պատմութեան» վերջում է (ԺԶ-ԺԷ. դդ., 1680 թ., 1730 թ., 1780-ական թթ., 1867 թ., 1901 թ.)։ Այստեղ ամփոփուած են ուխտաւորների այցերն ու նուիրատուութիւնները, Տաթեւի վանքապատկան գիւղերի պտղի եւ հուլաւարի հարկացուցակները, կալուածքները, թեմի վանքերն ու անապատները, առաջնորդ-վանահայրերի գաւազանագիրքը՝ սկսած Յովհան Որոտնեցուց մինչեւ Ներսէս Վրդ. Մելիք-Թանգեանց, Վաղադնի կամ Որոտնավանքի Կաթողիկէ եկեղեցու արեւմտեան պատի վիմագրերից մէկի ընդօրինակութիւնը, ինչպէս նաեւ պատմագրքի՝ Մեսրոպ Արք. Սմբատեանցի կազմած անուանացանկը՝ արտածուած ձեռագրի հիմնական՝ «Պատմութիւն տանն Սիսական» երկի բովանդակութիւնից։

---

[20] **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 242-244։ Ալիշանը յիշատակում է նաեւ Գեղարքունեաց մելիքների ու տանուտէրերի վաւերացրած պայմանագիրը (նոյն տեղում, էջ 34)։

[21] Ժամանակագրութիւն **Ստեփաննոսի Օրբէլեանի**, հրատ. պատրաստեց՝ **Ա. Աբրահամեանը**, Երեւան, 1942, էջ 40։

[22] **Յ. Փափազեան**, Ակոռու Ս. Յակոբայ վանքի Քէօթուկը, «Յօդուածներ», հ. Բ., էջ 73-74, ծնթ. 3։

[23] Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը), էջ 10։

[24] Ձեռագրի՝ ցարդ անտիպ ընդարձակ նկարագրութիւնն արել է Մատենադարանի գիտաշխատող Յասմիկ Իրիցեանը, ումից եւ շնորհակալութեամբ ստացել ենք այն։ Ըստ այդմ՝ ձեռագիրն ունի 30,5x20,5 չափսի 384 թերթ (383+1), նիւթ՝ թուղթ, գրութիւն՝ երկսիւն, գիր՝ բոլորգիր, տող՝ 23, կազմ՝ կաշեպատ տախտակ՝ թղթէ աստառով։

[25] **Օ. Եգանեան**, Տաթեւի գրատան ձեռագրերը, «Աշխատութիւններ», հրատարակութեան պատրաստեց՝ **Գ. Տէր-Վարդանեան**, Երեւան, 2014, էջ 53։

[26] ՄՄ 2868 ձեռագրում այն տեղ չի գտել, փոխարէնն ընդօրինակուած է նաեւ ՄՄ 1870 (266բ-7ա), 2924 (3ա-4ա), 5501 (4աբ) եւ այլ ձեռագրերում։

Քանի որ մեր խնդրից դուրս է պատմագրքի յաւելագրութեան քննահամեմատական բնագիր կազմելը[27], այստեղ, ՄՄ 6271 ձեռագրի հիմամբ, ժամանակագրական կարգով կը լուսաբանենք միայն նիւթի բովանդակային առանձնայատկութիւններն ու աղբիւրագիտական նշանակութիւնը։

Ա. 6ա-7բ [Վկայագիր Գեղարքունոյ մէլիքաց եւ տանուտէրաց]

*Պատմագրքի՝ յաւելագրութիւն ունեցող գրեթէ բոլոր ընդօրինակութիւնների սկզբում տեղ է գտել Գեղարքունիքի մելիքների ու տանուտէրերի՝ 1513 թ. Տաթեւի վանք կատարած ուխտագնացութեան արձանագրումը[28], որն ուսումնասիրութեան նիւթ է դարձրել վիմագրագէտ Սեդրակ Բարխուդարեանը[29] (նկ. 2, 3)։ Իրականում ուխտագնացութիւնն առիթ է եղել Գեղարքունիքի՝ Տաթեւի երբեմնի թեմ եւ վիճակ լինելը վերահաստատելու համար. «Երկիրն մեր Գեղարքունի, թեմ եւ վիճակ է Սուրբ առաքելոցս Ըստաթէի (Տաթեւի վանքի – **Ա. Յ.**)... ապայ գալս մեր յուխտ ի սուրբ Աթոռս, զկոնդաքս տեսաք... եւ կրկին հաստատեցաք այս բանս, որ ճշմարիտ էր...»[30]։ Այնուհետ նշուած են վանքի հոգեւոր առաջնորդների՝ Շմաւոն Եպիսկոպոսի, Տէր Ստեփաննոսի, Մարտիրոս փակակալի եւ Ղուկաս հայրապետի հետ դաշինք կնքած եւ հաստատած բոլոր ուխտաւոր մելիքների ու տանուտէրերի անունները. «Ես՝ **Փիրհամզէս**, որդի Եղիշին եւ թոռն մէլիք Միրզին, ես՝ **Թանկրիղուլս**, որդի մէլիք Ղուկասին եւ թոռն Պուղիկին, ես՝ **Էհիէս**, որդի Պուտախին, թոռն Տէլու Ղարտաշին, ես՝ **Թարխանս** Քթայշինեցի, ես՝ **Շահղուպաթս** Գաւառնեցի, որդի Աստուածայտուրին, թոռն Միրանշին, ես՝ **Պաշաթս** Կոթեցի, ես՝ **Մաթիոս** Կածեցի, ես՝ **Այսմայկուլս** Կնծուտեցի, ես՝ **Փիրի**, որդի Ղուպաթին, թոռն Պէրամին, ես՝ **Կունդուզս** Գանձակեցի եւ ամենքն ամենայնի»[31]։*

*Փաստաթուղթը վաւերացրել են Գեղարքունիքից եկած սարկաւագները, որոնց անուններն արձանագրուած են իբրեւ վկաներ. «ես՝ **Մուսէս** սարկաւագս, որդի Կոստանդին, թոռն Քահանայ իրիցն եւ **Սարկաւագ**՝ որդի Ամիրին, թոռն Միրզին՝ Կաթնուց գեղէն, ես՝ **Եղիշէ** սարկաւագս Դարանակուց, վկայ ենք, որ Գեղարքունոյ տանուտէրքն զայս բանս գրեցին, որ ճշմարիտ է Աստուծով»[32]։ Նոյնն աւելի հակիրճ եւ թերեւս այլ գրչի ձեռքով արձանագրուել է նաեւ գրքի յաջորդ էջին, իսկ վաւերացնողներն են. «ես՝ **Համզէս**, ես՝ **Նուշէս**, ես՝ **Թարխանս**, ես՝ **Մատթէոսս**, ես՝ **Ասմանգիլս**, ես՝ **Բաշարաթս**, ես՝ **Փիրումս**, ես՝ **Փիրհամզէս**, ես՝ **Կունտուզս**, ես՝ **Աղաբաթս**, ես՝ **Շաղուբաթս**, ես՝ **Ահի**... ես՝ **Թանկրիղուլիս**, որդի մէլիք Ղուկեասին, այս գիրս գրեցի, ՉԿԲ. (1513)»[33] (ընդգծումները մերն են – **Ա. Յ.**), որից յետոյ այն աւարտւում է եղծողներին կամ աղաւաղողներին ուղղուած նզովքի կանոնական բանաձեւով[34]։ Գիրը վերահաստատուել է նաեւ 1519 թ.՝*

---

[27] Պատմագրի բնական բնագիրը՝ կից յաւելագրութիւններով, կազմում է մեր գործընկեր, բ.գ.թ. Նաիրա Թամամեանը, որին եւ շնորհակալութիւն ենք յայտնում յօդուածի վերաբերեալ արուած շահեկան նկատառումների համար։

[28] Ուսումնասիրողներին այն երբեմն շփոթեցրել է, որի հետեւանքով ձեռագիրը թուագրել են 1513-ով, ինչպէս օրինակ բնագիրն աշխարհաբարի վերածած Աշոտ Աբրահամեանը ծանօթագրում է, որ երկի լաւագոյն օրինակը ՄՄ 6271 ձեռագիրն է, «որը ՉԿԲ. (1513) թուականից է» (**Ստ. Օրբէլեան**, Սիւնիքի պատմութիւն, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ **Ա. Աբրահամեանի**, Երեւան, 1986, էջ 405, ծնթ. 2)։

[29] **Ս. Բարխուդարեան**, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտէրերը ըստ Տաթեւի վանքի մի փաստաթղթի, «Բանբեր Մատենադարանի», հ. 8, Երեւան, 1967, էջ 191-227։

[30] ՄՄ 6271, 6բ։

[31] Նոյն տեղում։

[32] Նոյն տեղում։

[33] ՄՄ 6271, 7ա։

[34] Համանման է ոմն Նուրփաշայի անունից կազմուած յիշատակագրութիւնը, որը նաեւ նոյն թուականն է կը-

դարձեալ Գեղարքունիքից Տաթեւ ուխտի եկած Տէր Ստեփանոսի եւ Տէր Մելիքսէթի կողմից, ովքեր վաւերացրել են այն ու ապահովագրել նզովքի բանաձեւով. «մեք էլ տեսաք մեր ձեռաւք գրեցաք, ով որ էս թեմիս հակառակի, Սուրբ Առաքելոցս անիծեալ եղեցի. ամէն եւ եղեցի»[35]։

Ս. Բարխուդարեանը փորձել է իր հաւաքածոյում եղած Գեղարքունիքի նորայայտ վիմագրերի միջոցով որոշակիացնել փաստաթղթում յիշատակուած անձանց հասարակական դիրքն ու տոհմագրութիւնը։ Պարզւում է՝ վկայուած անձանցից իշխանական մելիք *տիտղոսն են կրում մելիք Փիրհամզէն ու մելիք Թանգրիղուլը[36], ինչպէս նաեւ՝ էհիէ Դէլիղարդաշեան տոհմից մելիք Մալխասն ու մելիք Մանուչարը, Կունղուզ Գանձակեցու տոհմից՝ մելիք Բարեքը (վերջին երեքի անունները փաստաթղթում ուղղակի վկայուած չեն)։ Նշուածներից առնուազն երեքի նստոցը գտնուելիս է եղել Նոր Բայազետի (ներկայիս Գաւառի) շրջանում՝ ընդգրկելով նաեւ Մարտունու շրջանը եւ հասնելով մինչեւ Սոթքի մելիք Շահնազարեանների տիրոյթների սահմաններին[37]։*

Բ. 337բ [Վասն նորոգութեան կոնդակայ]

Յաւելագրութեան այս միաւորը կարելի է դիտարկել նաեւ իբրեւ յետագայի յիշատակարան՝ գրուած կոնդակի նորոգման-կազմման առիթով։ Գրիչը Տաթեւի վանքի առաջնորդ Ստեփանոս Եպիսկոպոսն է, որն իր, ծնողների, հոգեւոր հօր եւ մի շարք այլ անձանց (անունները ջնջուած են) յիշատակին կոնդակը կազմել-նորոգել է տուել. «Տէր Ըստեփանոս, եպիսկոպոս Սուրբ Աթոռիս Ըստաթէի Սուրբ Առաքելոցս, կազմիլ տվի զկոնդակս...»[38]։ Սիւնեաց պատմագրքի բովանդակութիւնը՝ կից յաւելագրութիւններով, անշուշտ, թոյլ էր տալիս այն Կոնդակ կոչել[39]։ Տաթեւի վանքի գրատան ձեռագրացուցակը կազմելիս՝ Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ Արք. Սմբատեանցը տեղի 13 ձեռագրերի շարքում յիշատակում է նաեւ «Պատմութիւն Սիւնեաց»-ը, որը «անուանի ի Տաթեւ «Արմատ» (Քեօթուկ), որոյ յատուկ անուանց ցանկն ես կազմեցի 1866 թւին»[40]։ Իրաւ, քննուող ՄՄ 6271 գրչագրի վերջում Սմբատեանցի կազմած անուանացանկն է (տե՛ս աստ, նիւթիս վերջում), միայն թէ թուագրուած 1867-ով։ Այսու, Ստեփանոս Եպիսկոպոսի անուանակիր յիշատակագրութիւնը, որը ժամանակամերձ պիտի լինի նախորդներին (ԺԶ. դարի առաջին կէս), վկայում է վանքում պահուած կոնդակ (քօթուկ)-գիրքը նորոգելու մասին։

Գ. 7բ, 332բ, 341բ [Վասն կոնդակ կարդալոյ]

Յիշատակագրութիւններից մէկը կազմուել է Տաթեւի վանքի ուխտաւոր ջուղայե-

---

ռում. «ես՝ Նուրփաշէս Վարդենեցի, ազգէն Զարիկեցի, վկայ եմ այս բանի» (ՄՄ 6271, 7ա)։

[35] ՄՄ 6271, 7բ։

[36] Մելիք Թանգրիղուլը յիշտւում է նաեւ Տաթեւի վանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հարաւային պատի 1532 թուակիր նուիրատուական ընդարձակ վիմագրում, ուր վկայուած է նաեւ նրա մելիքանիստ Փառկուն (Փառակունք-Փառակունիս) գիւղի անունը (ԴՀՎ, պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, կազմեց՝ **Ս. Բարխուդարեան**, Երեւան, 1960, էջ 27, արձ. 47)։

[37] **Ս. Բարխուդարեան**, նշ. աշխ., էջ 224։

[38] ՄՄ 6271, 337բ։

[39] Կոնդակ է կոչւում նաեւ Զաքարիա Քանաքեռցու Պատմագրութեան վերջին՝ Գ. գլուխը, ուր ամփոփուած են Յովհաննավանքի մի քանի տասնեակ վիմագրեր, ձեռագրաց յիշատակարաններ ու վարձագրութիւններ (**Զաքարիա Քանաքեռցի**, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից, աշխ.՝ **Ա. Վիրաբեանի**, Երեւան, 2015, էջ 174-204)։

[40] Նկարագիր Երնջակայ Սուրբ Կարապետի վանից եւ շրջակայից նորին, գրեց՝ **Մեսրովբ Արք. Սմբատեանց**, Տփխիս, 1906, էջ 127։

ցի Միասարի որդի ոմն Ելամիրի անունից, որը 1680 թ. յունիսի ԺԴ.-ին ուխտի գալով Տաթեւ՝ «կոնդակս մի անգամ կարդացի»[41]։ Փաստօրէն, պատմագրքի գոյութիւնը տեւական ժամանակ մեծ համարում է ունեցել Տաթեւի վանքում, որը պատիւ են համարել կարդալու եւ յիշատակագրութիւն թողնելու վանք այցելած ուխտաւորները։ Նոյն յիշատակարանի համաձայն՝ Ելամիրը վանքում մնացել է երեք օր, իսկ ժամանակ անց՝ 1681 թ. փետրուարի ԻԷ.-ին գնացել է Սպահան, թերեւս հայոց Ս. Ամենափրկիչ վանք։

Կոնդակը կարդալու եւ վերծանելու մասին է վկայում նաեւ Սարգիս Վրդ. Մակուեցու 1715 թ. յիշատակագրութիւնը, որ «եկի ի Տաթեւու վանից մեծահռչակ եկեղեցի, զայս կոնտակս երկիցս անգամ ընդերցայ եւ վերծանուցի սակս պիտոյից եւ կարեաց Աթոռոյ մեծի Սուրբ Էջմիածնոյն»[42]։

*Աւելի ուշ՝ 1737 թ. գիրքն ընթերցելու առիթով յիշատակութիւն է թողել նաեւ Յովհաննէս Վրդ. Տաթեւացին, որը տեղեկութիւններ է հաղորդում նաեւ երկրում տիրող խառն իրավիճակի մասին, երբ «Դայթեւու (Տաթեւի – **Ա. Յ.**) գեղիս մնացեալ ժողովուրտն աստ բնակեցաւ մինչ ի Ժ. եւ Ե. (15) դարի, որ անունըն Ղալայ խօսեցաւ»[43]։ Պատմութիւնից յայտնի է, որ 1735 թ. Գանձակում, ռուս-իրանական պայմանագրի կընքումից յետոյ, Նադիր շահը (1736-1747 թթ.) փորձել է կասեցնել ռուսական տիրապետութեան ամրապնդումը տարածաշրջանում։ ԺԸ. դարի երկրորդ կեսին ծաւալուած հայ ազգային ազատագրական շարժման ընթացքում սաստկացել է հարկահանութիւնը, տուրքերի գանձումը, ինչի հետեւանքով Անդրկովկասի յատկապէս արեւելեան շրջաններում սով է սկսուել[44]։ Այս տեսանկիւնից ուշագրաւ է Տաթեւի գիւղամիջեան աղբիւրի 1745 թ. արձանագրութիւնը, ուր միեւնոյն Յովհաննէս Վրդ. (եպիսկոպոս) Տաթեւացին հաղորդում է, որ ցորենի բեռը (պարկը) արժէր 12000 դիան (արծաթէ դրամ)[45]։*

ԺԸ. դարով թուագրուող համառօտ մէկ այլ յիշատակագրութեան հեղինակ Տէր Աւետիսն էլ յայտնում է, որ «կոնդակս ի դուրս ձգեցի»[46], այսինքն՝ գիրքը դուրս բերեցի կամ դրսում թողեցի։

Դ. 7բ-8ա, 340բ, 341բ, 349ա [Ընծայագիրք եւ շինարարութիւնք]

Նուիրատուական բնոյթի արձանագրում-յիշատակումները բնորոշ են առաւելապէս վիմագրերին, սակայն ձեռագրերում եւս հանդիպում են այդպիսիք եւ դա պատահական չէ։ Լ. Խաչիկեանի դիպուկ բնորոշմամբ՝ «ձեռագրերն այս պարագայում կատարում էին ճիշտ այն դերը, ինչ միջնադարեան ճարտարապետական յուշարձանների պատերը՝ վիմական արձանագրութիւնների համար»[47]։ Տաթեւի Քօթուկ-մատեանում նման օրինակներից վաղագոյնը՝ ՋԻԵ. (1476 թ.) թուակիր յիշատակագրութիւնն է (բայց աւելի ուշ ընդօրինակութիւն է), ըստ որի՝ Բաղաբերդի գաւառից (Բաղքից) քիտիգանցի Օհանէսի որդիների՝ Կոստանդի, Մարկոսի եւ Թէոդորոսի անունից Ս. Ստաթէ առաքեալի վանքին (Տաթեւին) իբրեւ վախուբ (անձեռնմխելի գոյք) վարելահող է տըր-

---

[41] ՄՄ 6271, 7բ։

[42] ՄՄ 6271, 341բ։

[43] ՄՄ 6271, 341բ։

[44] Հայոց պատմութիւն, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կէս – 1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կէս – XIX դարի վերջ), խմբ.՝ **Ա. Մելքոնեան** եւ ուրիշ., Երեւան, 2010, էջ 64։

[45] ԴՀՎ, պրակ II, էջ 34, արձ. 65։

[46] ՄՄ 6271, 332բ։

[47] **Լ. Խաչիկեան**, Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերէն ձեռագրերի մէջ եւ նրանց աղբիւրագիտական նշանակութիւնը, էջ 422։

ել, որը գտնում է գետի՝ թերեւս Որոտանի միւս կողմում՝ իր խոտատեղերով, առուով, ջրով, որն ամրագրուած է նզովքով. «ով ոք, որ այս բանիս ընդդիմանայ, թէ՛ հայք, թէ՛ թուրք, նզովեալ եղիցին ի Հօրէ եւ ի Մօրէ»[48]։

Մէկ այլ՝ 1691 թուակիր նուիրագրում կարդում ենք, որ ծագումով շոռոթեցի Ջհանբեկանց Յովսէփի որդի Ջհանբեկն իր ծնողների, կողակցի ու զաւակների յիշատակին Տաթեւի կամ Ստաթէ առաքեալի վանքին է նուիրաբերել ոսկեջրած արծաթեայ խաչ՝ իր պատուանդանով, որի քաշը 280 դրամ է (=1 կգ 120 գ), առքը՝ 60 մարչիլ (եւրոպական արծաթ դրամ). «մէկ արծաթէ խաչ ոսկեջրած պատուանդանով, քաշ՝ ԲՃ. (200) ութսուն դրամ, առքն՝ Կ. (60) մառչիլ»[49]։

Նուիրագրերի շարքում է նաեւ ծագումով ագուլիսցի, բայց Շուշիում բնակուող Ղուլունց Թումանի անուանակիր յիշատակագրութիւնը (ԺԷ. դար), որը Տաթեւի վանքին է նուիրել Հարանց անապատի գետում (Որոտանում) մէկ ջրաղաց՝ ի յիշատակ իր ծնողների[50]։

Բովանդակային առումով նշելի է նաեւ Տաթեւի վանքի առաջնորդ Ներսէս Եպս. Ղալամեանց Տաթեւացու անունից կազմուած կարճառօտ գրութիւնը, ըստ որի՝ Վրաստանից գալով Տաթեւ մայրաքաղաք (եպիսկոպոսանիստ)՝ «արար բազում շինութիւնս եւ Տաթեւու սուրբ եկեղեցին, հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս եւ ամփոփեցին աստ»[51] (նկ. 4)։ Վկայուած եկեղեցին, ըստ ամենայնի, Տաթեւի գիւղամիջեան Ս. Մինաս եռանավ բազիլիկն է, որն ըստ հարաւային պատի նոյնաբովանդակ զոյգ վիմագրերի՝ կառուցուել է Հայոց ՌՂԵ. (1646) թուականին, Տաթեւացի Ներսէս Վարդապետի հոգածութեամբ[52]։ Տաթեւի վանքի զանգակատան մօտ երբեմնի գոյութիւն ունեցած տապանաքարի արձանագրութիւնը պարզում է, որ Սիւնեաց շնորհաշատ եպիսկոպոսն ու բարունապետը վախճանուել է Հայոց ՌՃ. եւ Դ. (1655) թուին[53], հետեւաբար սոյն յիշատակագրութիւնը թուագրելի է առնուազն 1650-ականների առաջին կէսով։

Յաջորդ յիշատակագրութիւնը, որը ոչ պակաս ուշագրաւ է, կազմուել է Մանուէլ Վարդապետի անունից, որը 1719 թ. ուխտի է եկել Տաթեւի վանք, երբ տեղի առաջնորդներ Կիրակոս Վրդ. Աղուերձեցու եւ Առաքել Վրդ. Կալերեցու օրօք, նախաձեռնութեամբ Գաբրիէլ աստուածաբան Վարդապետի՝ «շինէին վանքիս կաթուղիկէն»[54]։ Տաթեւի վանքի գլխաւոր՝ Ս. Առաքելոց տաճարի հիւսիսային պատին՝ արտաքուստ պահպանուած Հայոց ՌՃԾԴ. (1705) թուակիր վիմագրի համաձայն՝ ծագումով Մեղրիի Տաշտուն գիւղից խօջայ Անտոնի միջոցներով տաճարը նորոգուել է Տէր Միքայէլի ձեռամբ[55]։ Վիմագիրը, սակայն, չի յստակեցնում, թէ տաճարի ստոյգ ո՞ր մասը կամ մասերն են նորոգուել։ Յիշատակագրութեան մէջ վկայուած «կաթուղիկէն», կարող է բնորոշել ինչպէս գլխաւոր՝ մայր եկեղեցին, այս դէպքում՝ Ս. Առաքելոց տաճարը, այնպէս էլ նրա գմբէթը։ Մենք հակուած ենք այս վերջինին, քանի որ գմբէթի գլանաձեւ թմբուկի հիւ-

---

[48] ՄՄ 6271, 8ա, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ., խմբագրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Երեւան, 2017, սիւն 1001:

[49] ՄՄ 6271, 8ա, հմմտ.՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ., սիւն 1001:

[50] ՄՄ 6271, 349ա:

[51] ՄՄ 6271, 340բ:

[52] ԴՀՎ, պրակ II, էջ 34, արձ. 66:

[53] **Ս. Սաղումեան**, Նորայայտ վիմագրեր, «Լրաբեր» հաս. գիտ., 2001, թ. 1, էջ 98:

[54] ՄՄ 6271, 341բ:

[55] ԴՀՎ, պրակ II, էջ 18, արձ. 19:

սածոյ խաչաքանդակների ոճն իրաւ ուշմիջնադարեան է՝ բնորոշ ԺԶ-ԺԸ. դդ.։ Այդ է հաստատում նաեւ վանքի վանահայր Արտակ Եպս. Սմբատեանը, երբ այս ձեռագրի մէկ այլ յիշատակութեան հիմամբ Կիրակոս Եպս. Աղուերձեցու օրօք նորոգուած է համարում ոչ միայն կաթողիկէն, այլեւ վանքի պարիսպներն ու ախոռը[56]. «Նոր նորոգեաց մեծ կաթուղիկէն սրբոյ տաճարիս՝ օժանդակութեամբ Գաբրիէլ վարդապետին եւ շինեաց զպարիսպն եւ զթաւլայն հիւսիսային կողման...»[57]։ Ի տարբերութիւն նախորդ յիշատակման, այստեղ կաթողիկէի՝ գմբէթ լինելն աւելի որոշակի է, քանի որ այն վկայուած է «սուրբ տաճարի» համապատկերում՝ իբրեւ այդ նոյն տաճարի բաղկացուցիչ մասը։

Ե. 338ա-340բ Տաթեւու թեմի պտուղն այս է այժմ ժամանակի

*Տաթեւի Քօթուկն աչքի է ընկնում Սիւնեաց հարկատու գիւղերի համապատասխան ցուցակներով, որոնց նախօրինակը Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութեան» վերջին՝ «Սիւնեաց երկոտասան (ներկայացուած՝ չորեքտասան – **Ա. Յ.**) գաւառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին» խորագրով գլուխն է՝ ԺԴ. գաւառների 661 գիւղերի անուանական եւ հարկային միաւորների յիշատակմամբ[58]։ ՄՄ 6271 ձեռագրում պահպանուել են տասնչորս գաւառների պտղի[59], այնուհետ՝ հուլաւարի (տասանորդի) ցուցակները, որոնք հայագիտութեանն առաւել յայտնի են իբրեւ Տաթեւի վանքի նոր հարկացուցակներ (հինը Օրբէլեանինն է), որոնք, ըստ նախագաղափար օրինակի յիշատակարանի, կազմուած են Երեմիայ Վարդապետի կողմից՝ 1692 թ.[60]։ Պտղի հարկացուցակը կազմուած է ըստ գաւառների (Գեղուածորու, Բաղաբերդու, Կաքաւաբերդու, Մացրու, Աճանանու, Գիլաբերդու, Մաղանջուղու, Բարկուշատու, Զանկազուրու, Քաշաթաղուց, Զաւընտուրու, Ղարատաղու, Վերի ձորու, Սիսիանու) եւ 264 հարկատու գիւղերի՝ իւրաքանչիւր տեղանուան դիմաց նշելով գանձուող դրամի չափը, այսպէս.*

Գեղուածորու (Ջորf – **Ա. Յ.**) գաւառն

*Կից (Քիրս – **Ա. Յ.**)՝ ԳՌ. ԳՃ. (3300) [դահեկան]*

*Աչբէջ (Աչիբաջ – **Ա. Յ.**)՝ ԲՌ. ԹՃ. (2900)...*

Սիսիանու գաւառն

... Գթեւանց (Գօթանոր՞ - Ա. Յ.)՝ *Ռ. ԳՃԾ. (1350)։*

Զ. 342ա-343ա Հուլաւարն, այսինքն՝ վանքական գիւղօրէից հողոց տասանորդքն

1692 թուակիր երկրորդ հարկացուցակը յստակ սահմանում է Տաթեւի վանքապատկան գիւղերի՝ հողերի մշակման համար գանձուող տասանորդը, ինչպէս նաեւ՝ գիւ-

---

[56] **Արտակ Եպս. Սմբատեան**, Տաթեւի համառօտ պատմութիւն, էջ 348:

[57] ՄՄ 6271, 346բ:

[58] **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 509-523:

[59] Պտղին բնատուրի տեսակ է, որը գանձւում էր բերքով՝ հիմնականում տասանորդի չափով (ցորեն, գարի, իւղ, պանիր եւ այլն) – տե՛ս Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց**, Երեւան, 1945, էջ 125:

[60] Հայոց ՌՃՀԹ. (1730) թուականին ոմն Յովհաննէս Վարդապետի դպրարից Տէր Աղէքսանդրն ընդօրինակել է Երեմիայ Վարդապետի՝ 1692 թ. կազմած հարկացուցակը (նաեւ՝ հուլաւարը), որը նոյնութեամբ տեղ է գտել ՄՄ 1488, 2868, 2869, 6271 ձեռագրերում. «Զայս Յոհաննէս վարդապետի դպրարիցն առեալ աստ գրեցաք թուին ՌՃՀԹ. (1730)։ Որ Երեմիայ վարդապետին գրեալն թուին ՌՃԽԱ. (1692), մայիսի Ժ. (10) էր, Տաթեւու վանքին բահրէքն, որ է մուլքն, ես՝ Տէր Աղէքսանդրս, գրեցի յայն սիահիցն» (ՄՄ 6271, 342աբ)։ Յովակիմ Արքեպիսկոպոսը 1781 թ. ընդօրինակուած ՄՄ 1488 ձեռագրում աւելացրել է նաեւ պտղի նոր հարկացուցակ՝ «Ի սրբոյ աթոռոյս Տաթեւի բոլոր թեմի եւ վիճակի եղեալ Ժ.-նեաց (10) գաւառքն եւ գիւղքն նոցին, որք ներկայապէս շէն են նաեւ պտուղք նոցին» վերտառութեամբ (ՄՄ 1488, 218բ-220բ):

ղացիների կոռային աշխատանքի պարտավորութիւնը։ Վիմագրագէտ Գրիգոր Գրիգորեանի համոզմամբ՝ «հուլաւար» կոչուող փաստաթուղթը կոռային աշխատանքի վառ օրինակ է, ըստ որի՝ Տաթեւի վանքին ենթակայ գիւղերի բնակիչները պարտաւորուած են եղել կատարելու երկու տիպի կոռային աշխատանք. մէկը բնատուրքով վճարուող ռենտան էր (եկամուտը), միւսը՝ աշխատապարտ ռենտան, երբ գիւղացին պարտաւոր էր հնձել, հաւաքել հացահատիկ ու անասնակեր, կատարեր վանքին անհրաժեշտ ցանկացած աշխատանք, մի բան, որը կարելի է բնորոշել իբրեւ գիւղացու շահագործում[61]*։*

*Փաստաթուղթ-պարտաւորագրում իրենց հարկային միաւորներով յիշատակուած են Տաթեւ, Սուարանց, Աղանձ, Տանձատափ, Մալտաշ (Քաշունի), Շնհեր (Շինուհայր), Խոտ, Հալիձոր, Քրտեր (Հարժիսի ներքին շէնը), Բնունիք (Բնունիս), Դաստակերտ, Ղարաքիլիսա (Սիսիան), յետագայում լրացուած՝ «Կիրակոսիկ, որ է Աղքենդ (Աշոտավան – **Ա. Յ.**)» գիւղերը։ Որպէս օրինակ բերենք Տաթեւ գիւղի պարտաւորութիւնները սահմանող գիրը. «Տաթեւ. ԻԴ. (24) բեռն ցորեն եւ Դ. (4) լիտր մեղր տան եւ գլխովին բոլոր գեղովն մէկ օր վար անեն, Բ. (2) օր հունձ անեն եւ մէկ օր ալ ջառ անեն ինչ բան, որ լինի, եւ մէկ օր եզնարածքն, վանքիս համար խոտ հարեն»*[62]*։*

Է. 343բ-344ա [Սրբոյ Աթոռոյս արտօրէից անուանքն, խոտատեղիքն, սրանոցքն, այգիքն եւ հնձանքն]

Այս եւ յաջորդիւ ներկայացուող վանքապատկան հողերի, ձիթհան-սրանոցների, վանք-անապատների, այլեւ՝ առաջնորդաց գաւազանագրքի հեղինակը, ինչպէս վերը նշեցինք, Սիւնեաց առաջնորդ Յովակիմ Արքեպիսկոպոս Անգեղակոթցին է, որի հիմք ձեռագիրը ՄՄ 1488-ն է՝ գրչագրուած 1781 թ. Տաթեւի վանքում, Պաղտասար Վրդ. Քարահունջեցու ձեռքով[63]*։ Նախ յիշատակւում են վանքապատկան արտերն իրենց տարողութեամբ, այսպէս. «Սատանի կարմունջի բերանն՝ տեղի Բ. (2) սօմարի, Ուղտաքարն՝ տեղի Բ. (2) սօմարի... Տաշտունի հողն՝ տեղի Բ. (2) սօմար ու կէս բակլայի»*[64]*, այնուհետ յիշատակւում են խոտատեղերի սահմանները՝ «Ղազալկապն՝ Քարահունջի գետէն մինչ ի ծակսն... Ցաքուտն յանցի փոսի ճանապարհէն մինչ ի խաչն եւ մինչ ի ցից խաչն, կեռ Տամբալասէն մինչ ի գետն»*[65]*։ Սրանց յաջորդում են ձիթհան-սրանոցների տեղագրական յիշատակումները, որ ունի Տաթեւի սուրբ աթոռը «մին սրանոց յԱխլաթեանն է, Ա.-ն (1) Քրտերն, Բ. (2)՝ ի Շնհէր, Ա. (1)՝ ի Տաթեւ, մերձ նմին»*[66]*, ինչպէս նաեւ «Բ. (2) այգի եւ Ա. (1) հնձան ի Մեղրու Փոքր թաղն, Ա. (1) այգի, Ա. (1) հնձան եւ իւր առաջի ալուն ի Շուանուձոր»*[67]*, նաեւ՝ վանքին վախմ արուած Ներսէս Վարդապետի այգին, Նանախի այգին, Տէր Ղուկասի ու Թունու հողակտորները, Ղոշանցու այգին իր հնձանով եւ վանքի ստորոտին գտնուող Ընկուզուտը։*

---

[61] **Գ.Գ. Գրիգորեան**, Սիւնիքի վանական կալուածատիրութիւնը IX-XIII դարերում, Երեւան, 1973, էջ 177-179։

[62] ՄՄ 6271, 342բ։

[63] Հմմտ. ՄՄ 2868, 2869, իսկ ՄՄ 1488-ը յաւելեալ ունի ոչ միայն պտղի նոր ցուցակը, այլեւ Իբրահիմ խանի օրոք իշխած բարեպաշտ եւ քրիստոնեայ իշխանների անուանացանկը, «որք ի փորն Սիւնիս, այսինքն՝ յերկիրն Աղուանից...» եւ «ի մերումս համայն թեմի եւ վիճակի» (218աբ)։

[64] ՄՄ 6271, 343բ։ Սոմարն ընդեղէնների չափ է, հաւասար 4 գրիվ, մօտ 3 ցենտներ տարողութեամբ (Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ, էջ 240)։

[65] Նոյն տեղում։

[66] Նոյն տեղում։

[67] ՄՄ 6271, 344ա։

Ը. 344ա [Սրբոյ Աթոռոյս թեմի՛ վանք եւ անապատք]

Այս ցանկում իբրեւ աթոռապատկան վանք են յիշատակուած Մեղրիի Ս. Յովհաննէսը (Անապաստանաց վանքը), Կարճեւանի Ս. Յովհաննէսը, Ծիծեռնավանքը, այլ ձեռքով լրացուած նաեւ՝ Երիցվանիկի (Արծուանիկի) Ս. Ստեփանոս Նախավկայ վանքը, իսկ անապատներից՝ Տաթեւի մեծ անապատը, Հարանց անապատը, Շինուհայրի Ս. Աստուածածին կուսանաց անապատը, Կապանի Հալիձորի Ս. Աստուածածին կուսանաց անապատը, Մալեւի Ս. Ամենափրկիչ կուսանաց անապատը, Տանձափարախի (Բեխի) անապատը։ Նշուած հոգեւոր կենտրոնների մեծ մասն աւելի վաղ յիշատակուած է նաեւ Ստեփանոս Օրբէլեանի կազմած հարկացուցակում։

Թ. 344ա-354բ Իսկ կարգ, թիւ, անուանք եւ գործք Սրբոյ Աթոռոյս եպիսկոպոսացն այսոքիկ են, զորս ի հետեւեալսդ ցուցանիցէ

Յովակիմ Արքեպիսկոպոսի կազմած Սիւնեաց առաջնորդների եւ Տաթեւի վանքի վանահայրերի շարակարգութիւն-գաւազանագիրքն է, որը, ինչպէս վերը նշեցինք, իբրեւ յաւելուած հրատարակուել է պատմագրքի փարիզեան ու թիֆլիսեան հրատարակութիւնների վերջում։ Ցանկը սկսւում է Յովհան Վրդ. Որոտնեցուց եւ ՄՄ 6271 ձեռագրում ժամանակագրական ընդմիջումներով ու յետագայի լրացումներով հասնում է մինչեւ 1901 թ. (42 անուն)[68]։ Ցանկում երբեմն մանրամասն ներկայացւում է այս կամ այն առաջնորդի կատարած յիշարժան գործը՝ հիմնականում շինարարական-նորոգչական աշխատանքները։

Ժ. 355ա Արձանագրութիւն ի վերայ արեւմտեան որման տաճարի Որոտնայ վանից

Տնտեսական բնոյթի գրագրութիւններ բովանդակող Քօթուկ-մատեանների գրիչների ուշադրութիւնից չէին կարող վրիպել նուիրատուական վիմագրերը։ Դրա առհաւատչեան Սանահինի Քօթուկն է, ուր վանքից շուրջ երեսուն վիմագիր է ամփոփուել։ Մեր խնդրոյ առարկայ ձեռագրի յաւելագրութեան մասում տեղ է գտել միայն Որոտնավանքի Ս. Կարապետ եկեղեցու արեւմտեան խաչաթեւին՝ արտաքուստ պահպանուած ընդարձակ վիմագրի ընդօրինակութիւնը, իսկ միւս երկու ձեռագրերում (ՄՄ 2868, 2869) Ստեփանոս Օրբէլեանի պատմագրքի ԿԶ. գլխում յիշատակուած Տաթեւի վանքի Ս. Առաքելոց եկեղեցու հարաւային սեան՝ ներկայում կիսաեղծ վիմագիրն է, որը ժամանակին հրատարակել է Սեդրակ Բարխուդարեանը[69]։ Ինչ վերաբերում է ՄՄ 1488 ձեռագրին, ապա այստեղ էլ Օրբէլ իշխանի՝ վաղաժամ մահը սգացող դամբանականն է, թէեւ վերնագրուած է «Այս է արձանագիր Մեծի իշխանիս Օրպէլի, որ գրեցաւ ի վերայ շիրիմի իմոյ»[70]։

Դառնալով Որոտնավանքի վիմագրին՝ ասենք, որ այն հրատարակուած է «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի համապատասխան պրակում[71]։ Թէեւ Ս. Բարխուդարեանը չի օգտուել ձեռագիր ընդօրինակութիւնից, սակայն իր ժամանակ պակասաւոր մասերը լրացրել է ըստ նախորդ հրատարակիչների (Մ. Փափազեան, Ղ. Ալիշան, Ե. Լալայեան)։ Վանքի վերականգնման աշխատանքներից յետոյ ամբողջացուել է նաեւ

---

[68] Հմմտ. **Արտակ Եպս. Սմբատեան**, Տաթեւի համառօտ պատմութիւն, էջ 343-350:

[69] ԴՀՎ, պրակ II, էջ 15-16, արձ. 11:

[70] ՄՄ 1488, 216բ:

[71] ԴՀՎ, պրակ II, էջ 100-101, արձ. 288:

այս վիմագիրը, որն ընդգրկող քարերի մեծ մասը 1950-ականների վերջերին ընկած է եղել։

Վիմագիրը բովանդակութեամբ շինարարական-նուիրատուական եւ ինչ-որ տեղ նաեւ՝ կանոնաիրաւական է։ Կազմուել է Հայոց ՉԿԴ. (1315) թուականին Էլիկում Օրբէլեանի որդիների՝ Բուրթէլի եւ Բուղտայի անունից։ Ըստ բնագրի՝ վանքի առաջնորդ Հայր Մխիթարի նախաձեռնութեամբ Սիւնեաց իշխանները նորոգել են «զվաղինջուց աւերեալ եւ զխաղտեալ վանս Վաղադնու»[72], որին նաեւ նուիրատուութիւններ են արել՝ իրենց հայրենի (սեփական) Երեմես գիւղը (ըստ Ստ. Օրբէլեանի հարկացուցակի՝ վճարել է վեց միաւոր հարկ), Շամբում՝ հողամաս, Շնհերում (Շինուհայր)՝ Աղուշանց կոչուող հողը, ջուրն ու այգին, ինչպէս նաեւ որոշակիացրել են վանքապատկան տիրոյթներն իրենց սահմաններով. «գետովն ի Շրջանաքարն եւ ի Քաէլիճն ի յԱյծաղագն»[73]։ Ի նշանաւորումն կատարած գործի՝ արձանագրութիւն է կազմուել իրենց յիշատակի ու զաւակների արեւշատութեան համար, ինչպէս նաեւ պատարագ է սահմանուել՝ տարին մէկ Քառասուն, այսինքն՝ Բարեկենդանից մինչեւ Զատիկն ընկած 40-օրեայ պահքի օրերին։

- 356ա-383ա [Յուցակ անուանց ի Պատմագրութեան Ստեփաննոս եպիսկոպոսի Օրբէլեանց]

Թէեւ այս միաւորը տնտեսական-նուիրատուական բնոյթի որեւէ գործարք չի բովանդակում, այնուհանդերձ հիմք ձեռագրիս յաւելագրութիւնների ընդհանուր պատկերն ամբողջացնելու համար հարկ համարեցինք այն եւս ընդգրկել։ Միաւորի հեղինակն ու գրիչը Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ Արք. Սմբատեանցն է, որը մեծ աւանդ ունի հայերէն սկզբնաղբիւրների ուսումնասիրման ու հրատարակման գործում։ Նա այն քչերից է, որ դեռեւս ԺԹ. դարի երկրորդ կեսին կարեւորել է պատմագիտական բնոյթի աշխատութիւններում անուանացանկերի անհրաժեշտութիւնը (որպիսիք ունեն նաեւ իր հեղինակած աշխատութիւնները)՝ ի նպաստ ընթերցող-ուսումնասիրողի։ Իր կազմած անուանացանկը Սմբատեանցը կոչում է «Յուցակ անուանց երեւելի անցից, արանց, քաղաքաց, գիւղօրէից, վանօրէից, բերդօրէից, աշխարհաց, գաւառաց եւ այլոց սոյնպիսեաց՝ պարունակելոց ի Պատմագրութեան Ստեփաննոս եպիսկոպոսի Տարսայիճեան Օրբէլեանց»[74]։ 1867 թ. պաշտօնական այցով լինելով Ս. Ստեփէի (Տաթեւի) վանքում եւ տեսնելով պատմագրքի փարիզեան (1859 թ.) եւ մոսկովեան (1861 թ.) տպագիր, ինչպէս նաեւ ձեռագիր օրինակներում անուանացանկերի չգոյութեան փաստը՝ «աշխատութիւն յանձն առել կազմեցի զայնպիսի ցուցակն այբուբենական կարգաւ եւ կցելով ի վերջէ Պատմագրութեանս ի դիւրութիւն որոնողաց այնց անուանց...»[75]։ Այսպէս, ըստ այբբենական հաջորդութեան՝ Սմբատեանցը կազմել է պատմագրքում վկայուած անձնանունների, տեղանունների (գաւառ, քաղաք, գիւղ, դաշտ, գետ, լեռ եւ այլն) եւ զանազան տերմինների միասնական ցանկ. օրինակ՝ Ա միաւորի ներքոյ կարդում ենք.

Աբաղայ, խան Թաթարաց – 553, 615 եւ 618

Աբաս, թագաւոր Հայոց – 378 ...

Աբասաձոր, գիւղ Հաղարծին վանից – 460 ...

[72] Նոյն տեղում:

[73] Նոյն տեղում:

[74] ՄՄ 6271, 356ա:

[75] ՄՄ 6271, 357ա:

Ազգաբանութիւն նահապետաց Սիւնեաց – 23 ...

Աղանձոյ, գետ մերձ Տաթեւոյ վանից – 705 ...

Ասորի, ազգ – 542 ...

Ասպետութիւն Սիւնեան իշխանաց – 29 ...

Աստիճանք ինն դասակարգութեան եկեղեցւոյ – 155 ...

Արքայուն, անուն քրիստոնէից տուեալ ի թաթարաց – 540 ...[76]*։*

Ինչպէս տեսնում ենք, անձնանուն-տեղանուններից բացի, Մեսրոպ Արք. Սմբատեանցը պատմագրքից դուրս է գրել նաեւ առարկայական բնոյթի անունները՝ եկեղեցական տերմիններ, կոչումներ, ցեղանուններ եւ նմանիք։ Ողջունելի է բազմաշխատ հոգեւորականի ձգտումն անուններին լրացուցիչ համառօտ ծանօթագրութիւն կցելու սկզբունքը։ Սա մեծապէս կարեւորւում է գիւղերի, մանրատեղանունների տեղորոշման, արտասանութեան, բարբառային դրսեւորումների եւ համանման այլ երեւոյթների լուսաբանման տեսանկիւնից, շնորհիւ որոնց Սմբատեանցի կատարած գործը սոսկ անուանացանկ չէ եւ ունի բոլոր նախադրեալներն առանձին ուսումնասիրութեան նիւթ դառնալու համար։

Այսքանով ամբողջանում է Ստեփանոս Օրբէլեանի Պատմութեան վաղագոյն՝ ԺԴ. դարով թուագրուող ՄՄ 6271 գրչագրի յաւելագրութիւնների հաւաքածոն, որն ամփոփում է 1513 թուականից ի վեր պարբերաբար լրացուած տնտեսական, ի մասնաւորի՝ հարկային ու նուիրատուական բնոյթի վաւերագրեր եւ այլ օժանդակ նիւթեր[77]*։ Վաւերագրերի բովանդակային քննութիւնը պարզում է յաւելագրութիւնների եւ դրանց յետագայ ընդօրինակութիւնների քօթուկային բնոյթն ու Քօթուկ կոչուելու հիմնաւոր լինելը։ Պատմագրքին կից նիւթերը բացառապէս Սիւնեաց եպիսկոպոսանիստ կենտրոնի՝ Տաթեւի վանքապատկան թեմերից, վիճակներից, գիւղերից գանձուող հարկացուցակներ են, մլքատու հողերի ու կոռային աշխատանքի պարտաւորութեան վաւերագրեր, որոնք զուգակցուած են Սիւնեաց առաջնորդ-վանահայրերի գահացանկով, ընծայագրերով, այցելու-ուխտաւորների թողած տարաբնոյթ գրառումներով։ Այս շարքում թերեւս բացառութիւն է Որոտնավանքի Ս. Կարապետ եկեղեցու շինարարական-նուիրատուական բովանդակութեան վիմագրի ընդօրինակութիւնը, որն այլ ձեռագրերում փոխարինուած է հիմնականում Տաթեւի վանքի Ս. Առաքելոց եկեղեցու հարաւային մոյթի վիմագրերից մէկով։*

Կարելի է արձանագրել, որ Գեղարքունիքի մելիքների ու տանուտէրերի 1513 եւ 1519 թթ. վկայագրերի հիմք ձեռագիրը ՄՄ 6271-ն է, ինչը չի կարելի ասել պտղի նոր հարկացուցակի, մլքատու հողերի, աթոռապատկան վանք-անապատների, առաջնորդ-վանահայրերի համապատասխան ցանկերի մասին, որոնք կազմուել են Սիւնեաց առաջնորդ Յովակիմ Արք. Անգեղակոթցու յանձնարարութեամբ՝ 1781 թ. (ՄՄ 1488)։ Իսկ Երեմիա Վարդապետին վերագրուող պտղի եւ հուլաւարի (տասանորդի) 1692 թ. հարկացուցակները ոմն Յովհաննէս Վարդապետի դաւթարից արտագրել է գրիչ Տէր

---

[76] ՄՄ 6271, 358ա-361ա:

[77] Նիւթն աւելորդ չծանրաբեռնելու համար ՄՄ 6271 ձեռագրի՝ ֆնոնող խնդրից դուրս նկատուած մի քանի մանր յիշատակագրութիւններ այստեղ չենք ներառել, այսպէս՝ Մարտիրոս Բիսեցու կիսաեղծ յիշատակագրութիւնը ինչ-որ ջաղացի առիթով (7բ), Գրիգոր Վարդապետի 1710 թ. հաղորդումը ձեռագիրն Աղէքսանդր Ջուղայեցի Կաթողիկոսի պատուերով ընդօրինակելու մասին (7բ), ոմն Շապանեցի Սարդարի որդու ծնունդը 1753 թ. օգոստոսի 26-ին (341բ), վանքի առաջնորդ Պաղտասար Վարդապետի յիշատակութիւնը (307ա), մելիք Մանուչար Օրբէլեանի որդիների ու թոռների 1899 թ. անուանական թուարկումը (343բ):

Աղէքսանդրը 1730թ. (ՄՄ 6271), որոնք գրչի յիշատակարանի հետ միասին յետագայում ընդօրինակուել են նաեւ մեզ ծանօթ միւս ձեռագրերում։

Աներկբայ, Ստեփանոս Օրբէլեանի Պատմութեանը կից յաւելագրութիւնները՝ յետագայի ընդօրինակութիւններով եւ ամբողջութեան մէջ իրենց ուրոյն տեղն ունեն «Քօթուկ» կոչուող բնագրերի շարքում՝ իբրեւ Սիւնեաց եպիսկոպոսանիստ կենտրոն Տաթեւի վանական-տնտեսական կեանքի լուսաբանման արժանահաւատ սկզբնաղբիւր։



Նկ. 1 Պատմագրի տիտղոսաթերթը, ՄՄ 6271, 7բ



Նկ. 2 Գեղարունիքի մելիքների եւ տանուտէրերի վկայագիրը, ՄՄ 6271, 6բ



Նկ. 3 Գեղարքունիքի մելիքների եւ տանուտէրերի վկայագրի շարունակութիւնը, ՄՄ 6271, 7ա



Նկ. 4 Ներսէս եպս. Տաթեւացու յիշատակագրութիւնը, ՄՄ 6271, 340բ



Նկ. 5 Պտղի հարկացուցակը, ՄՄ 6271, 338ա



Նկ. 6 Հուլավարի ցուցակը, ՄՄ 6271, 342ա



Նկ. 7 Վանքապատկան արտերի, խոտատեղերի եւ սրանոցների ցուցակը, ՄՄ 6271, 343բ



Նկ. 8 Վանք-անապատների ցուցակը եւ «շարակարգութեան» սկիզբը, ՄՄ 6271, 344ա



Նկ. 9 Ռոտնավանքի Ս. Կարապետ եկեղեցու շինարարական-նուիրատուական վիմագրի ընդօրինակութիւնը, 1315 թ., ՄՄ 6271, 355ա



356

714

ԳՈՒԳԱԿ

Անուանց երեւելի ՀԱՅՑԻ, ՍԻՐանց, Բաղաքաց,
Գիւղերէից, Վանորէից, Բերդորէից, Հշ-
խարհաց, Գաւառաց, և այլոց սոյնպիսեաց,
Զարուեստիլոյ Ի Պատմագրուէ Ստեփան-
նոս Եպիսկ. Տարայիճեան Օրբէլեանց.
Ժողովեալ և յարմարեալ ըստ Սիրբ-
քինայսն Հարգի՝ աշխատասիրութեամբ
Մխաքեայ ՍՄԲ Էջմիածնի Վարդ-
Մեսրովբ Վրդ. Սմբատեանց
Նոյեան-Նախիջևանցւոյ։

Յամի տն 1867.
և Լուսաւորչական 1567.
Ի Սբ Էջմիածին տարեալ.

712

Նկ. 10 Մեսրոպ Արք. Սմբատեանցի կազմած անուանացանկի տիտղոսաթերթը, ՄՄ 6271, 356ա



357

715.

յամի տն 1867. և հուսաւորչական 1567 ;~
ի կաթուղիկոսութեան Հայոց Տ. Դ. Գրիգոր. և
ի կայսերութեան Ռուսաց Բ. Ալեքսանդր Նի-
կոլայևիչի. և ի Փոխարքայութեան Վրաստանի և
Հայաստանի կայսրազգեալ Միխայէլ Նիկոլայևիչ
ես Դիաբան ՝ի Էջմիածնի մեր սրբոյն Լուսաւորչի
ամբարանաց Հաւրիզուաձի՝ Դրանեանս յուսա-
ւորչական Հայոց Արիւծորդի՝ ՝ի հրամանէ
պաշտօնական գրագրաց պատուելոյ ատենի
Ս. Աստուածի՝ ՝ի ամենայն. որ ՝ի Խարիզան
Վրաստանի Հայոց գաւառքս գտանին ազգային.
Գալեր՝ի մեր ամենայն գուշակն տպագիր
ու ձեռագիր մատենից վաղեմի ատենագրի
գրքոյս. որոյ ՝ի մեզ ոչ գտան՝
մագրուին Օրբէլեանց Սուքիասեանս Եպիսկ.,
տպագրեալ ապ ՝ի Փարիզ Քաղաքացոյ
ամի 1854. ու ՝ի Մոսկուա Ռուսաց-
ամի 1861. մի գրեալ ՝ի ոտանաւորս գանկ ու
գուշակն էր ՝ի մի մարդոյ. մեզի, մեղրոյ,
գիշերոյ, վաղորդի, քիթոյ, աչքոյ, ձեռ-
քոյ, գլուխոյ, ու այլոց կոչեալոց.
ուստի ամենայն ցանկն ամենայն գրեալ
գիրք յուսոյն մեր ամենայն գրքոյս. ուստի
՝ի մեծի պատուելոյ ՝ի գիրարանէ դրանդաց
այնց աստուծոյ՝ Քաղաքի ամենայն հոգոյ Ճա-
ուայոնէ խնդ՝ մեզի, ոչ այլոյ մեզ զանազանեալ ու
մի քիրարանի՝ գրեալ ՝ի ՀՐԱՄԱՅԱԳՐԵՑ:

~ Օրդնեալ է Աստուած :~

715

Նկ. 11 Մեսրոպ Արք. Սմբատեանցի յիշատակարանը, 1867 թ., ՄՄ 6271, 357ա



Նկ. 12 Անուանացանկի սկիզբը, ՄՄ 6271, 358ա

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Պատ.գիտ.թեկ., ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Մաշտոցեան Մատենադարան